ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/3162-21 առ « 03.» 12. 2021թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2021թ.

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝
տիկին Մ.Բլբուլյանին
E-mail: arma.tender@mail.ru

[№01/028 առ 19.03.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ տիկին Բլբուլյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-ЕУЗ (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 19-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մարտի 19-ին կնքվել է թիվ 01/028 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3540000 (երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 30 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 2124000 (երկու միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 708000 (յոթ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ և 4-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 708000 (յոթ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»:

- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 240 օրացուցային օրում:

  Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝
- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մարտի 19-ին կնքած թիվ 01/028 պայմանագիրը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Պետրոսյան
ԳԲ առաջատար մասնագետ
+374 10 28 29 60